ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2020թ. Ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10

ՈՒՂԵՐՁ
ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ զինվորներ և սպաներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման 28-րդ տարեդարձի առթիվ:

Հայաստանի անկախացման օրից ի վեր մեր ամենակարևոր ձեռքբերումն ազգային բանակի կայացումն է:

Այսօր, տարածաշրջանում ամենամարտունակ Հայոց բանակն ապահովում է մեր անկախ պետականության հետագա հզորացումն ու հայի արժանապատիվ, անվտանգ կյանքը, ինչի համար երախտապարտ ենք մեր անդորրը դիրքերում և խրամատներում պահող հայ զինվորին ու սպային:

Մեր բանակի կազմավորման ակունքներում անուրանալի է շիրակցի մարտիկների ներդրումը: Նրանցից շատերն այդպես էլ չտեսան իրենց իսկ ստեղծած բանակի փառավոր ներկան:
Հավերժ փա՛ռք նրանց հիշատակին:

Հայոց բանակը մեր հպարտությունն է, հայի անկոտրում կամքի վկան:

Խաղաղություն մեր երկրին, զինված ուժերին նոր ու փառավոր տարեգրություն:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ